

արխիւնիւթ առ ձեռն պատրաստ շատ կայ, պէտքէ միայն ենթարկել նորան փութաջան եւ սաստիկ գիտնական արուեստական վերլուծութեան: Տրահանգ առնելով այդ ժամանակ նոյն իսկ մեթօդները եւ չափերը, որոնք տուեցին ժամաախտային թոյնի վերլուծելու ժամանակ այնպիսի փառա-որ եւ հաւասար հետեւանքներ: ժամանակը, նիւթական միջոցները եւ աշխատութիւնը, որոնք անշուշտ հարկաւոր են այդ փորձերը անելու համար, կգործագրուին մեծ շահով, քան թէ այն ժամանակը եւ միջոցները, որոնք փասնօլմեն ներկայ ժամանակում զանազան ստիկանական — բժշկական միջոցները գործնականապէս իրականացնելու համար:

(Թարգմանէաց)

Զատարխո Տ. Զատարխանց.

Լ Զ Մ Ի Ա Ծ Ն Ի Բ Ա Հ Ո Ւ Բ Ր Ի Չ:

« Հայաստանի սովը և Էջմիշին » անունով մի գրքոյկ ձեռքս ընկաւ օրերս, հեղինակութիւն Արմենակ Սիւնիի, հետաքրքրութիւնս շարժուելով ծայրէ ի ծայր կարգացի, թէեւ առանց ախորժանքի եւ տխուր տպաւորութեան տակ, տեսնելով որ երբեմն մարդիք այնչափ գերի են լինում կրքի, մինչ բոլորովին կուրօրէն ուրանում են սպիտակի գոյնը եւ ամենայն ինչ սեւ մթութեան մէջ են տեսնում:

Ես նկատեցի, որ այդ գրքի ամբողջ նիւթն ու բառերն իսկ « Մշակի » առաջնորդող (ԴԷՊ Ի ԿՈՐՈՒՍՏ) յօդուածների կրկնունութիւն են, Արմենակ Սիւնիի կեղծ անուան ներքեւ: Թէեւ չարժէր այդ գրքոյկի անհամեստ ու սանձարձակ լեզուագարութեան եւ ցնդաբանութեան պատասխանել եւ այն եւս Արարատի կամ Մեղուի պէս մի լուրջ թերթի էջերում, բայց որպէս զի ընթերցողները չկարծեն թէ՛ յիշեալ գրքոյկի մէջ մի մազի չափ ճշմարտութիւն կայ, կամ նորա հեղինակը գէթ ճանաչում ու պատուումէ հրապարակասօսի ս. պարտքն եւ ըստ այնմ հանգէս գուրս եկած է մի ծառայութիւն անելու ազգին, գրիչ

ձեռք առի մի համառօտ ակնարկ գցել նորա բռնած ընթացքի եւ ուղղութեան (Գէ.ՊԻ ԿՈՐԾԱՆՈՒՄՆ) վերայ եւ նորա հայհոյանաց անպրակն ամբողջապէս դատարկել իւր հեղինակի գլխին, ըստ տաճկական առածին «էսա՛ ՚էօղ ՚էսա՛ արա՛ս», «էսա՛ արա՛ւս սահապընայ», վատ խօսքը՝ վատին, վատ գրամն՝ տիրոջ (դարձնել)։ Նոյն գրքոյկի հայհոյանքներ լսողն կամ ընթերցողն բնաւ չի մեղադրիլ ինձ, տեսնելով որ ես ինձանից ոչինչ նախատանաց բան աւելացրած չեմ, բայց միայն յետ եմ դարձնում նորա առ աղգային ընդհանրութիւն ուղղած հայհոյանքներն՝ դէպի ինքն հայհոյիչն, խնդրելով Արարատի պատուարժան խմբագրութիւնից ընդունել իւր էջերի մէջ սոյն պատասխանը։

ԱՌ. Պ. ԱՐՄԵՆԱԿ ՍԻՒՆԻ Ի ՏՓԻՍՍ.

Պ. Սիւնի, նախ քան քեզ պատասխանելս ընդհանրութեան կողմից (այս քո հպարտ սծն է), խոստովանում եմ, որ ես քեզ չափ վարժ չեմ սուր հայհոյանքի մէջ, թէեւ տարիներով Մշակի հայհոյանաց բառարանը զահլէս տարած է. ուստի քեզ միայն «արա՛ս» անուն տալով եւ ապացուցանելով, քո բոլոր նախատինքն՝ զորս անխնայ տեղացել ես աղգի ընդհանրութեան — Հայ հոգեւորականութեան գլխին, նոյնութեամբ քեզ վերադարձրած կլինիմ։

Պ. Սիւնի, փարախի գրան մկկալդ այծի է, բայց անախորժ ձայնդ մատնացոյց է անում իտիական ախպր եւ փորիք ցաւն. հանդերձներդ, գիմակդ Յակոբին է, բայց ձայնդ դաժան Նսաւին է. մի կարծիր որ Նսահակ հայրդ — աղգդ քեզ խաբուելով օրհնութեան կարժանացնէ, պատրաստած որսդ կուրօրէն ընդունելով, ո՛չ բնաւ. Հօրդ աչքերը սրատես են եւ հեռատես. ուստի եւ քո բաժինքն է նախատինք, անէծք եւ արհամարհանք. տրտունջ մի անիր, վասն զի եթէ Քամն ծաղրելով իւր հօր — Նոյի յանգէտս պատահած մերկութիւնն, անէծք ստացաւ, ապա առաքինութեամբ զարգարուած մի Հայրն իբրեւ մերկ ներկայացնել, այն էլ ոչ եղբարց առաջ, այլ բնդհանուր աշխարհի եւ օտարների առաջ, ո՛րքան ապերախութիւն է եւ արժանի դատապարտութեան եւ անէծքի, ոչ միայն անմեղ ու բարերար Հօրից, այլ այն ամենից, որ լսում են զրպարտութիւնդ։

Պ. Սիւնի, դու այնքան մնորուել եւ այլանդակուեր ես, պատուոյ զգացումէն անգամ զրկուելով, մինչ հրապարակախօսի եւ մամլոյ յարգութիւնը, լսեմ վարկն ու համարումն ոտնակոխ ես անուժ սանձարձակ լըբութեամբ եւ հայհոյութեամբ. ծայրահեղ զրպարտութեամբ եւ ստախօսութեամբ. գոնէ յարգէիր հրապարակախօսի եւ մամլոյ ազնուութիւնը: Քեզ ազատախօս ես հրատարակում, բայց չես ճանաչում ազատախօսութեան չափն ու սահմանը. մամուլը կամ հրապարակախօսը այն պարտաւոր է մտրակել, խայտառակել մոլութիւններն, հարստահարողներն եւ ամեն տեսակ անազնիւ գործեր ու գործողներ, բայց ոչ բնաւ մասնաւոր սխալալի հաճոյանալու մտօք նորա չտիրածն ատել, զրպարտել կամ օտարին գործիք գառնալ:

Գիտե՞ս պ. Սիւնի, ինչ է քո ընտրած Մենտորի — առաջնորդի (Մշակի) ուղղութիւնը, որին պաշտում ես եւ նորա խօսքեր իբրեւ պատգամ Արամազդի կամ Գեղբեան եռաժանի լիբայ նստող պատգամախօսի վճիռ ես ընդունում. նա իւր տասնամեայ գոյութեան մէջ Հայ հասարակութեան կամ գէթ մարդկութեան ոչինչ օգուտ չտալուց զատ, աւելի վնասեց, իւր յանգուգն յարձակմունքներով. ինչ հիմնարկութեան մէջ որ նա չէ առաջնորդել, կամ չէ մասնակցել, անօգուտ եւ ազգավնաս է հրատարակել, թէ եւ չկայ մի հիմնարկութիւն՝ որ իւր հեղինակութիւն լինի կամ մասնակցութեամբ սկսած. նա միշտ օտարի ածած ձուի վերայ է թուխս նստել եւ այն եւս ճիւղ է հանել, նա միշտ ինքն իրան հակասել է, երեկուան սիրածն այսօր ատել է, իւր սկզբանց մէջ միշտ փոփոխական է եղել, բայցի հայ եկեղեցւոյ ու եկեղեցականաց վերայ յարձակելուց, հաստատ է միայն անհաստատութեան մէջ, նորա գլխի ցաւն է բռնում, արիւնք երակներ ի մէջ եփ է գալիս Հայ եկեղեցւոյ կարգ ու կանոն եւ եկեղեցականաց անունը լսելիս: Առածներ ի սպառնաց են նոյն իսկ Մշակի թերթերն, զորս դու քաղուածք ես արել զբրոյիկդ մէջ, աւելի պարզն ատելով անբաժան ստուերի պէս հետեւել ես նորան:

Գանք գէպի քո զրպարտութիւններդ:

Պ. Սիւնի, զբրոյիկդ 7րդ երեսում ասու՞մ ես ի՞նչ կը լինէր, որ եթէ ոչ խստութեամբ, գոնէ սրտաշարժ եւ ազգու հրաւէրներով Եջմիածինը ժողովրդի ուշադրութիւնը գարձնէր Հայ սո-

վատանջների վերայ. . . . Իւր կոնգալիներից մի քանիսն ուղարկէր նուիրատու ժողովրդին աւելի սիրտ տալու: Աւրեմն, պ. Սիւնի, դու փոխանակ երկու աչքերիդ եւ երկու ախանջներիդ գործ ես ածում միայն լեզուդ. փոխանակ երկու լսելու, երկու տեսնելու եւ մէկ խօսելու: միմիայն խօսում ես ու խօսում: կամաւ խաւ եւ կոյր ես դարձել ու չես կամեցել տեսնել կամ լսել Եջմիածնի ազգու հրաւերներ առ ամենայն ազգայինս՝ Արարատի միջնորդութեամբ: Վեհափառ Վաթուղիկոսի կոնգալիներով, Արեւիկի հրաւերներով եւ հրամաններով առ Առաջնորդս, առ Թեմական տեհանս եւ առ Հոգ. կառավարութիւնս: Գուցէ դու այնքան ստեր ես լսել կամ ինքդ այնչափ ստեր ես խօսել, որ ուրիշի պատմած ճշմարտութիւնը քեզ անհաւատալի ես համարում, ախանջներիդ չես հաւատում: միայն աչքերիդ ես վրստահանում: փառք Աստուծոյ, փոխանակ երկու աչքերի, չորս աչք ունիս, ախոյոյներ ես դնում: (ինչպէս հաւատարի գլխեմ) որպէս զի աչքերդ էլ քեզ չխաբեն, նոյն չորս աչքերով գայիր՝ տեսնել այն սուրի ճգնաժամին, թէ՛ Եջմիածնի պարսպի տակ սրբան Թուրք, Քուրդ, Եզիզի եւ Ասորի Հայ սովատանջների հետ միասին Եջմիածնի տաք—տաք յըռուրն ու կակուղ պօքոններն էին վնայելում կշտապինս, քանի՞ հարիւր ընտանիք իւրեանց օրա կան հացն ու կերակուրը մրջիւնի պէս կրում էին Եջմիածնի սեղանատանից եւ հացատանից, սրբան մարդիք ծառայում էին գորանց կերակրելու, ինչպէս Ալաշկերտի գաղթականաց ժամանակն, սրբան ցորեան փոխարինարար տանում էին ամբարից Վաղարշապատցիք, Օշականցիք եւ այլք, օրէն քանի՞ կարաւան սովատանջներ Տաճկահայաստանից ու Երեւանի նահանգից Եջմիածին դիմելով եւ միքանի օր սնունդ ստանալով ցրուում էին հեռաւոր տեղեր, հանդերձ եւ այլն պիտոյքներ էլ ձեռք բերելու նուիրատուաց բարեսրտութեամբ: Ի՞նչ անէր Եջմիածին, հրաշից դարձ անցել էր, ոչ Յիսուսի հինգ ու եօթն հացեր եւ ոչ Եզրայէի եզն ու ալիւրն կային սարսափելի սովատանջ բազմութեանը լիացնելու, ինչ որ կարողն էր անել Եջմիածին, արաց առանց ինայելու, տիւ եւ գիշեր հացատան եւ ամբարի դռներ բաց էր արել, Արեւիկի գրագիրներ պարապում էին կոնգալիներ եւ հրաւիրագրեր ու հրամաններ արտագրելու եւ ամէն տեղ ուղարկելու: Այն, իբրեւ գլխած Հայր չէր խնայում ամէն ջանքն իւր որդիք

կերակրելու, սովի ճանկից ազատելու, իմաստուն Յոսիսիի նման ճշգեղով էր մատակարարում, որքան հնարաւոր էր, վասն զի ապագայի երկիւզն մի ծանր մտատանջութիւն էր պատճառում Էջմիածնին իւր բազմաթիւ միաբանութիւնն, իւր ձեւորանի ունեքն եւ բոլոր իրան դիմողներ սովից ազատելու հնարքներ խորհելով: Բայց եթէ դու պ. Սիւնի, իբրեւ ազգի Էնթակալ պատգամաւոր եւ հաշուապահ հաշիւ եւ պահանջում հասարակաց Հօրից, դիմիր սովատանջների կետր, յանձնաժողովի ընդհանուր տեղեկագրին, երբ ժամանակին հրատարակուի. գերզատանի Հօր պարտքն է ըստ կարի պահպանել իւր գերզատանն աւանց ցուցամոլութեան, սնապարծութեան եւ փուռասիրութեան գիտելով հպարտանալու եւ երեսին զարնելու իւր կատարած պարտաւորութիւններն:

Պ. Սիւնի, քաջ հաշուապահ եւ երեւում Էջմիածնի հանգանակած 17 հազարի տոկոսեաց տոկոսների մէջ. յոյս ունիմ որ քոյ Բ. գործի մէջ նոյն հաշուով կը հաշուես պ. այբէ-ժարուէի վանայ համար քսան տարի յառաջ հանգանակած հազարների տոկոսեաց տոկոսներն. բայց վանեցիք յօժարակամ բաշխում են նորա ժառանգորդներին անուշ անելու այդ տոկոսիքն իբր վարձ աշխատութեան, իսկ գրամագլուխն ծախսել մրցանակ գնելու ձեղապիսի քաջ հաշուապահի եւ հեղինակի տալու:

Պ. Սիւնի. թէեւ Էջմիածին չի ցանկանում որ իւր ձախ ձեռքն իմանայ իւր աջ ձեռքի արած բարիքն, բայց զայն ընդունողներն երախտապարտ որտով ճանաչում ու քարոզում են, որ Էջմիածինն արաց, ինչ որ կարօղ էր անել. փրկեց հազարաւորների կեանքը սովի ճանկից, աւելի պահանջողները թող նախ քննեն իրանց արածն, թէ որքան օգնեցին Էջմիածնին, չասեմ թէ աւելի ընդգիւհացան, թելադրեցին, գրգռեցին ժողովրդին Էջմիածնի ձեռօք չօգնել սովատանջներին, ապացոյց այսմ Մշակի թերթերն:

Պ. Սիւնի, 14րդ երեսում փարիսեցական հպարտութեամբ ինք զինքդ Հայութեան պաշտպան եւ բարերար եւ հրատարակում եւ ճշակաւ կեղտոտ խօսքերով յարձակուում եւ Էջմիածնի վերայ՝ արտառապելով Մշակի հայհոյանքներն. որով բացայայտ երեւումէ, որ քո դարդն ոչ սովն է եւ ոչ սովատանջները

ինամատարութիւնն, այլ միմիայն նոյն նպատակաւ Հայ հոգեւորականութեան եւ նորա ներկայացուցիչ Ա.Ե.Տ. Կաթողիկոսի բոլոր սխրագործութիւններն եւ ազգագուտ հիմնարկութիւններն իրբեւ ի վնաս ազգի ցոյց տալ: Արդէն անցաւ սոյն իւր Խառն գէպքերովն, այժմ՝ բնաւ կտրել սրութիւնն եւ առիթ չկար կրկնելու եւ ոչ եւս հանգանակութեան դիմելու: անցաւ այժմ սոյն, բայց անմահ մնաց թէ Էջմիածնի քարերարութեան անունն առ սովատանջս եւ թէ այն ամեն անհատի անունն, որ լսեցին Մայր Աթոռի հրաւերին եւ օգնեցին մարդասիրաբար ամեն մի սովատանջին կամ նոյն թշուառութեան մասնուած ազգաց, առանց խարութիւն գնելու հասակի, սեռի, ազգի եւ կրօնի: Չեն մոռանում Էջմիածնի երախտիքն (ներկայ Ա.Ե.Տ. Հայրապետի օրով) սովատանջ Կաղատացիք, Պարսկաստանցիք եւ ի վերջին նուագամբողջ Հայաստանի ժողովուրդք, բայց դու, ինչպէս ապերախա շրէայ փարիսեցի առ ոչ ինչ համարելով ամեն երախտիք, գրգռում ես ժողովուրդն՝ ազազակել քո շարժ, Խառն Եւսէն անմահ Բարերարին: Բայց զսէր է քո ջանքդ, եւ հոյմարածութիւն է: Հայ ազգ շատ փորձերով զգաստացել ու համոզուել է, որ քեզապիսի Արեւեցու հաւատալն սարսափելի յիմարութիւն է: Ազգար յառաջ քո հայրենակից եւ պաշտօնակից ազգագաւ Արեւեցին քեզանից աւելի խաբել, կեղծաւորել, շոգօքորթել ու շորթել է Հայ ժողովրդին բաժանուել իւր հոգեւոր Գլխից, բայց չէ յաջողել, սակայն այդ մասին փոխանակ երկար ու բարակ պատասխանելու քեզ կամ համոզելու, ուղարկում եմ քեզ մի գրքոյի՝ «Նորդիմախօսութիւն Արքանայ Ընդ Աստիկայ» անունով: Հեղինակութիւն Ս. Գնունուոյ, նորա մէջ ըստ պատշաճին կստանան օրինաւոր պատասխանդ, թէ քո նախորդիք եւ թէ քո նպատակդ նոյն է, անշուշտ վախճանն եւս նոյն պիտի լինի: Եթէ ոչ մահապարտից բանտ եւ որդնալից մահ, բայց անարակոյս ընդհանրութեան նախառնիք եւ արհամարհանք, պատմութեան եւ ազգայնարգար լծիւն առ ազգագաւս եւ գրպարտիչս ազգի:

Պ. Սիւնի, արդէն քո եւ քեզապիսեաց գիմակն պատառուել է, ամեն ոք ճանաչում է թէ դու սով ես եւ ինչ նպատակի ես ծառայում: Գիտէ որ քո տղայական սպառնալիքներ սղնձի զօղանչում են, ինչ որ երազում ես, ինչ որ տենդաբանում ես, ա-

ուանց հեռեւանաց կը մնան, երազդ ու ցնորքդ միշտ երազ ու ցնորք կը մնան եւ միայն ինքդ ես խարուում:

Պ. Սիւնի, չկարծես թէ ես գրիչ ձեռք առի անդգամ գրածիդ անդգամու թեամբ պատասխանելու, ոչ, բնաւ, իմ գրածներս հայհոյանք չեն եւ ոչ եւս ճշակական կամ սխալական ԻՇՈՅՆԵՐ, ինչպէս վերեւն ասացի, ես անվարժ եմ այն տեսակ անձուանի ճարտասանութեան, իմ ծանր ու խիստ երեւցած բառերս կրքի արգիւնք չեն, այլ միայն քո եւ քեզապիսիների գիմակին թափանցիութիւն տալ, ձեր ներքինն, ձեր գաղանիք համարածն, ձեր սել վարագուրով ծածկած ազգակործան նպատակն ի յոյս արեւու հանել, թէեւ դու ինքդ արդէն քո օրավարձդ որոշել ես գրքոյկիդ 24 եւ 25 երեսներումն չամբողջ ազգի ատելութիւնն, անարգանք եւ հալածանք ձեր գէմ, փոխանակ քաջագործութեանդ, սրով կամիս բաժանել Հայ ժողովուրդն իւր եկեղեցուց, իւր հոգեւոր Պիսից, մի վաղանցուկ ու երեւակայելի օգտի համար. փորում ես Հայ եկեղեցւոյ հիմքն սապալելու եւ օտարից հաց որսալու նպատակաւ, սրք քեզ կացին շինած՝ մեղանից պատրաստած կոթովդ գցել են մեր անտառի՞ մէջ անխնայ կտորել պաղատու ծառերն:

Պ. Սիւնի, քո պարսկական երկարաբանութեան գլխաւոր նիւթըն է Այաշկերտի գալթականաց համար Էջմիածնի հրաւերներով ու կոնդակներով հանգանակած 17 հազար բուբլին Մշակի պահանջման համաձայն չգործողութիւն զայրոյթն՝ որի պատասխանն տարիներով յառաջ ստացել է քո նախատիպդ, քո կազապարգ Մշակը, Արարատի խմբագիր Արժ. Ս. Վ. -ի. կարճ եւ ազգու ազգարարութեամբ, բայց զարմանում եմ աղայամտութեանդ վերայ, թէ ի՞նչի ազգի կեզծ բարեկամ Մշակի հարցման անբաւական ես համարում Արարատի Արժ. խմբագրի պատասխանն, եւ Մշակի պահանջն ազգի պահանջ եւ համարում, որը յաւետ օրգան է իւր կրքին, օտարաց եւ այլոց իւր ֆալճիներով եւ քառալիներով, իսկ Հայ եկեղեցւոյ եւ ազգի ձայն ու պաշտպան Արարատն իբրեւ վարձկան փաստաբան կամիս ցոյց տալ:

Պ. Սիւնի, ինդրեմ ասան եթէ Մայր Աթոռն կամ նորա Քահակալն — ազգի իրաւանց պահապանն իրաւունք չունի ազգային ստացուածքն յօգուտ ազգին գործադրելու, ինչպէս ցնորաբանում ես 32րդ երեսում, ապա քեզ սիլ տուեց այդ իշխանու-

Թիւն, այդ պատգամաւորութիւն եւ հաւատարմութիւն, խել նորա դարեւոր սրբագործեալ իրաւունքն, ինքդ իբրեւ Ենչակաշ Բջնորդ եւ պաշտպան ձեւանալով ազգային իրաւանց:

Պ. Սիւնի, Հայ ազգ քաջ համոզուած է, որ ձեր խմբակը օտարի զանազան է, օտարի ձայն է զուսուցած ձեր մէջ, ձեր եզանակով ոչ ով չի պարուս, ոչ ով չի խաղում, ձեր խացուցիչ զուսուցումներ, զահլա տանող շունդներ չունին ոչ մի ներգաշնակութիւն, թէեւ միշտ փոփոխուում են ԳՌԻՆՍՎԻ ԳՈՒՆՆԱՎԻՅԻԿ գայի, արջի եւ կապի տեղափոխութեան կարգով, Թերեւս ինքդ համոզուել ես, որ ձեր փշած զուսուցան մի որ եւ իդէ ներգաշնակութիւն ունի, բայց խիստ կրտսալուիս, ձեր ամեն մի շնչաւութիւն, ամեն մի փշումներ միմեանց հակառակ ու ներհակ են, եւ այս հեշտութեամբ կարող էիր խմանալ եթէ ահանջիդ խցած բուրգն ու բամբակը մի քանի բոսէ հոնէիր, Ձեր զուսուցան երբեմն գուռաց դպրոց, դպրոց, երբեմն հրացան հրացան, երբեմն արուեստանոց, արուեստանոց, եւ երբեմն էլ գայի օրօր իշարապէս: Ձեր անզուսպ կրքին խաղալիք շինեցիք Էջմիածին իւր գործողներով: Վ. Պօլսոյ պատրիարքարանն իւր երեսփոխաններով, միշտ մտրակեցիք ազգի անձնանուէր պաշտօնեաներին, նոցա ամեն մի ազգօգուտ հիմնարկութիւններն իբրեւ վնասակար հրատարակեցիք:

Պ. Սիւնի, ոչ մի օտարազգի անհատ չէր կարող իրան այնչափ կորցնել, իրան այնչափ անազնուացնել, որ ամբողջ Հայ հոգեւորականութիւն ներքին թշնամի ներկայացնէր ազգին եւ արտաքին թշնամու հետ բարգաւտելով աւելի վտանգաւոր զրպարտէր, ուրանալով նորա անուրանալի բարիքներն առ ազգն եւ առ եկեղեցին. որքան դու բոլորովին մարդկութեան չափն ու սահման կորցրած, մարմնացած լրբութեամբ հայհոյում ես 38 թգ երեսում թէ «Իւրեանց պաշտօնին չհամապատասխանող անարժան հոգեւոր պաշտօնեաներ սկսեալ Էջմիածնի ամենաբարձր հոգեւորականից մինչեւ գիւղական յետին ժամկոչը աշխատում են հայեր կուրութեան մէջ պահել, որպէս զի նորանց աչքեր չբացուին»: Եւ 39 թգ երեսում աւելի եւ աւելի յառաջ մղելով ծայրայեղ զրպարտութիւնդ, ասում ես, «Էջմիածնի թելագրութեամբ կաշառել են թուրք պաշտօնեաներին, քիւրդ պէյերին եւ նոցա սպառնալիքներով եւ չարչարանքներով առել են

խեղճ հայ ժողովրդից դանազան անկանոն արգիւնքներ, չխնայելով նոցա կեանքն անգամ . . . եւ իբրեւ ապացոյց զրպարտութեանդ, զրպարտում ես Յ. Առաջնորդին: Ինչպէս որ Ռուս — հայաստանում մամուլն կրից գործիք էք շինել ձեր օտարահոգի խմբով, նոյնպէս եւ ձեր մի ամուլակիցն Կ. Պօլսոյ ազգի արժանաւոր գործիչներ ձեռք առած զրպարտումէ աւելի կատաղութեամբ, աւելի վտանգաւոր կերպով, շորթելով շոգաբորթելով (երբեմն ձեր խմբէն Կառնան անուանեալն) Ս. Ներսէս Արքեպիսկոպոս — սպարիարքին, նորա ձեռնարկութեանց խոչընդոտ է զրպարտում Ազգ. Վարչութեան անդամներին, որպէս զի յաջողի նախանձ եւ ատելութիւն գրգռել նոցա մէջ եւ ինքն պղտոր ջրում իւր որսն անէ, այսինքն բաժանում գցել Հայ հոգեւորականութեան եւ քաղաքական գործողների մէջ, փոփոխել արժանաւոր պաշտօնեաներ եւ անարժաններով եկեղեցւոյ կարգն ու կանոնն խանգարել, որով եւ իւր նպատակին հասնել:

ԿՐԳ երեսում ցաւում ես թէ ինչի՞ կ'ըմիածնի ձեմարանի վարչութիւնն քանի տարի յառաջ արգելել է Մշակ կարգաւ աշակերտներին: Պ. Սիւնի, խնդրեմ ասա՛, ո՞ր համեստ ծնօղ ներում է իւր զաւակներին թողնել իւրեանց պարապմունքներն ու գնալ լսել փոփոցային հայհոյանքներ, եւ ո՞ր համեստ հայրը ներումէ իւր որդւոց՝ կարգաւ կամ լսել ձեր անազնիւ գրածներն, որ թոյն են անմեղութեան եւ միամտութեան, եւ յորդոր ապերախտութեան:

Ինչ Պ. Սիւնի, Հայ հոգեւորականութեան մէջ գտնում ես միմիայն երկու անձնաւորութիւն, Ս. Ներսէս եւ Խրիմեան, բայց ոչ թէ իրօք նոցա աշխատութիւնն քեզ գիւրեկան է եկել եւ կամ օգտաւէտ ես համարում, այլ որովհետեւ կամենում ես ծածկել ծայրահեղ ատելութիւնդ գէպ ի Հայ եկեղեցականք, իբրեւ գիմակ ես գործածում այդ երկու հոգեւորականների գովութիւնդ, որոց եթէ չստեմ աւելի, բայց հաւասար աշխատակիցներ շատ կան Հայ հոգեւորականութեան մէջ, թէեւ երբեմն քո ձուլիչ Մշակն հայրենեաց մատնիչ անգամ հրատարակեց Ն. Սրբազանին, եւ ուղղակի ու անուղղակի ձեւերով թուրքաց մուկեանդների կատաղութիւնն հրաւիրեց Խրիմեանի վերայ, նորան իբրեւ ապստամբութեան պարագլուխ եւ

յեղափոխապէս հրատարակելով, որով թուրքիոյ կառավարութիւնը մտադրուեց Կ. Պոլիս կանչել ու դատել նորան, սուտ եւ ինքնահնար լուրեր հրատարակեցիք եւ ցոյց տուիք թէ Վանայ եւ այլն հայաբնակ տեղերում ապստամբութեան կեդրոններ են պատրաստուած: Խնդրեմ ասացէք, սորանից աւելի մասնութիւն եւ զրպարտութիւն կարելի՞ էր սպասել թուրք լրագրից: ձեր բարեկամութիւնն արջի բարեկամութիւն է, մի հարուածով մահացնել ազգային գործողներին: Այո՛, ձեզ ցաւ է Վահ. Տ. Տ. Գէորգ Գի, Ամենապատիւ Ս. Ներսէս եւ Խրիմեան Արքեպիսկոպոսաց եւ այլոց գործունէութիւն եւ նոյն իսկ ներկայութիւն տեսնել կամ լսել: ձեզ ի ներքուստ հաճելի եւ համակրելի են Հասունեան, Պոյաճեան, Ամիրխանեան եւ այն ամեն անձնաւորութիւններ, որ յաջողակ են ազգի մէջ երկպառակութեան որոմն ցանկը: գժտութեան խնձոր գլորելու, ասածներն կենդանի ապացոյց են ձեր խմբակի սոսոստութիւններն եւ տղայական գատողութիւնները: Ինչպէս անցեալ տարի ձեր ամսականից հասարակ իւր սուտ եւ ինքնահնար լուրերով լցրեց Գօլոսի եւ Մշակի թերթերն, թրդութակցութեան ս. պարտաւորութիւնն ի վատն գործածելով եւ մամուլն իւր ստախոսութեան գործիք շինելով, հնարեց թէ «Հայեր կատարեցին քրդաց գեղեր, Ասորի Մարշիմանի օգնութեամբ Վանայ բերգը գրաւեցին եւ յանձնեցին Խրիմեանին եւլն. եւլն. իսկ այս տարի Կ. Պոլսում ձեւանում է իբրեւ ռուսահայոց միակ պատգամաւոր եւ հաւատարմատար, իւր սուտ ու մուտ լուրերով եւ ձրի զրպարտութիւններ կուտելով Հայ ազգի ներկայացուցիչների գլխին հոյու հացի հետ հայու միան ուտելով, բայց շուտ ճանաչեցին Կ. Պոլսեցիք նորա նպատակն ու հեռացան, եւ կրկնեցին Եղիշէի վճիռն «եգիտ այս Աւտիացին զայն Սիւնեցին համամիտ եւ համաձայն ի կործանումն հայութեան եւ եկեղեցոյ»:

Պ. Սիւնի, Տաճկահայք որքան ճշմարտութիւն գտան այդ պարոնի շահատակութեան պատմութեան մէջ, որ լցրին Մշակի թերթերն եւ շինեցին նորան հասարակ պարի: սովատանջներն եւս նոյնքան ճշմարտութիւն են նկատում քո սով եւ Եղիշէին անուն կրող գրքոյկի մէջ, եւ լաւ հասկացան, որ քո նպատակը է միմիայն Հայ հոգեւորականաց վարկն ու համարումն սոսկալիս անել եւ

քանդել էջմիածնի հիմն, սրի պայծառութիւնն ցաւ է մեր թէ արտաքին եւ թէ ներքին թշնամեաց:

Պ. Սիւնի, զրպարտութեանդ 52րդ հրեսում ցաւում ես Արարատ ամսագրոյ ճուղրական ԱՐԱՐԱՏ անուն կրելու վերայ եւ առաջարկում ես քո բնաւորութեան յատկանիշներից մին ընտրել (կրտէրի հրացան, խաւարի զօրութի, լուսաւորութեան լիշառի, արշիպոսութեան շեջուի եւ այլն): Պ. կնքահայր, եթէ ազգութեան եւ եկեղեցւոյ օրգան ու պաշտպան Արարատն արժանի չէ նուիրական ԱՐԱՐԱՏ անուան, միթէ եկեղեցւոյ ԲԱՆՆՈՒ ԲՐԻՉ Սիւնին արժանի է Արմենակ անուան, մինչդեռ իւր գործերն կնքում են զինքն Սիւնեցու ամենայարմարաւոր վերտառութեամբ:

Պ. Սիւնի, որքան ցաւ էր քո անուանակից եւ պաշտօնակից մարդպան Սիւնեցուն Յովսէփի Աէնդ եւ Սահակ անուններ լրեսին, թէեւ նեղն ընկած ժամանակը կեղծաւորութեամբ պաշտում էր նոյն անուններն, նոյնպէս եւ քեզ վիշտ է լսել Գէորգ Գ. Ներսէս եւ Խրիմեան անուններ, մինչդեռ աշխատում ես արգարացնել նոյա պատժածներն եւ սրբացնել այնպիսի հոգեւորականներ, որոց կենսագրութեան եւ պաշտօնավարութեանց բնաւ տեղեակ չես .:

Է՛հ պ. Սիւնի, պատճառ եղար Արարատի ընթերցողաց գլխացաւութեան, ճէի պոչը կարճ եմ անում, արդէն յայտնի եղան որ քո գրածներն ոչ միայն զրպարտութիւն են, այլ եւ իրարու հակասական տենդաբանութիւն. դու նկարագրումես Ս. Մանկունին իբրեւ տիպար ազահութեան եւ հարստահարութեան եւ մի եւ նոյն ժամանակ ձեւացնումես սարսափելի շուայլ եւ անհաշիւ մոխող. ասումես «Մանկունին 25 հազար բուբլիով գահալիփել տուեց Խրիմեան պատրիարքին, եւ 50 հազարով էլ աշխատում է Ներսէս պատրիարքին գահալիփել, . . . Սայիգ փաշայի ձեռքով թունաւորել նորան . . .», եւ ի՞նչի, ի՞նչ հարկ այդքան գումար վատնելու (եթէ ունի), ի՞նչ նպատակով, ի՞նքն ստանալու պատրիարքական պաշտօնն, եւ այդ պաշտօնից որքան վտտակելու ակնկալութիւն, բաց ի քաղցած քնելուց, բացի աւելի աշխատելուց, նեղուելուց եւ ձեղապիսիներից զրպարտելուց. այս զրպարտութիւնն կնիք ես դնում միւս ծայրահեղ զրպարտութեանց, բայց հաւատի եղիր, որ քո գրեցիլի ընթերցողներ քեզ կատարեալ թուրթակ են անուանում, անգիտակցաբար

ուրիշի կրկնածն կրկնելու, կամ իսպառ խելացնոր շապկահան մին: Գիտե՛ն պ. քո գրածներ — անգիտակցաբար ուրիշի կըրկնածներդ կարդացողներ, քեզ նմանեցնում են երբեմն կ. Պօլսի ազգային հիւանդանոցում գտնուած խելացնոր Գէօրջն (Գրիգոր, գուցէ եւ քո իսկական անունն էլ Գրիգոր լինի) որ մի բառ օրերով կրկնում էր շարունակ «ցուրտ է, ցուրտ է, ցուրտ է», երբ յիմարապահն զայրանալով նորա վերայ ասումէր «շոգ է, շոգ է», նա էլ մոռանալով «ցուրտ ցուրտ» կրկնելն, կրկնում էր «շոք է շոք է»: Այսպէս անցեալ տարի ձեր խմբակի բերանը ընկած էր «Ղազար տէր Ղազարեան եւ Սարգիս Նազարեան» անուններ, մի տարի շարունակ այնչափ կրկնեցիք, որ ընթերցողի զահլան տարաք, եւ այս տարի չեմ՝ յիշում թէ որ խենթապահն զայրանալով ձեր անմիտ կրկնաբանութեան վերայ փոխել տուեց ձեզ եւ սորվեցուց սերտել ու կրկնել «Մանկունի» անունն, եւ ինչ զեղծում, ինչ մի վատ իրողութիւն նկատէք ազգաց մէջ ծագած «Մանկունին» էք նշմարում նոյն գործոց մէջ, այդ էլ մի տեսակ ցնորք է: Աստուած ցոյց չտայ իմ թշնամուն անգամ:

Պ. Սիւնի, ստախօսների համար տածկական առածն ասում է, «Արաբերէն սովորելն ի՛նչ հարկ, յարմարցու՛ր. ասո՛ մի բան, կը լինի Արաբերէն» (արաբճա պէլմէք նէ՞ հաճէթ, ուլտուր ուլտուր սէօյլէ): Իսկ ստախօսելու եւ զրպարտելու մէջ լաւ ճարտարաբան ես, կարող ես ասե՛ որ «Հայաստանի սովն էջմիածնի խորհրդով եւ ձեռքով սկսաւ, Մշակի ձեռքով բարձաւ»: Քեզ համար փաստ եւ ապացոյց ի՛նչ հարկաւոր, մամուլն ազատ է, գրիչդ պատրաստ, թանաքն առատ, գրի՛ր ու տպի՛ր, վիմագրի՛ն էլ պարապ է 12 բուրլիով գծում է ուզածդ պատկերներ. այսպիսով դու քիչ միջոցի մէջ նպատակիդ կը հասնես, մի քանի հազարներ գիղելով կապրիս, դու օտարի մունեալիկ ես վարձուել, բարձր ձայնով ազալակիր ըստ «սոսայ, հասայ, ճաղայ», քեզ էլ մուշտարի պակաս չի լինում. հասարակաց արհամարհանքն ու զղուանքն առ ոչինչ համարել քո սիղբունքդ է, ապագայից երկիւղ եւ ամօթ կրելու զգացմունքդ արդէն մեռած է:

Ս. Բ. Գ. Վ.